Բ. ՏԱՐԻ ՇԱԲԱԹ 9 ՕԳՈՍՏՈՍ 1897 ԹԻՒ 51

# ԻՐԱՒՈՒՆՔ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1897 տարեշրջանի
Պոշկարիոյ համար տարեկան 10 ֆր
„ „ 1/2 „ 5 „
Արտասահմանի համար „ 12 „
„ „ 1/2 „ 6 „
Կանխիկ վճարելի

Նամակ դրամ եւ այլն, իրկել հետեւեալ հասցէով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՒՈՒՆՔ» ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Редакция на вѣстникъ „Иравункъ“ ВАРНА (България).

Rédaction du journal „Iravounk“ VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք եւ չեն ղրկուիր եւ յարմար դատուածներն միայն կը հրատարակուին ամբողջովին կամ մասամբ։

Ծանուցմանց տողը 20 սանթիմ. երեքէն աւելի անգամներու համար 20 առ 100 զեղչ կը լինի։

## ՀԻՆ ԵՒ ՆՈՐ

Արուեստներու և գիտութեանց յառաջդիմութիւնը կը զօրացնէ մեր խորհելու կարողութիւնը, կը զարգացնէ մեր միտքը՝ նոր գաղափար յղանալու ընդունակ ընելով զայն։ Բարեշրջման այս օրէնքին բնական հետեւանքն է որ ներկան անցեալին վրայ կոնենայ իր առաւելութիւնները և նոր սերունդը, իր նախորդը և աւելի հինները կը գերազանցէ իր մտային պաշարովն և աւելի լայն հայեացքներովը։

Այս ճշմարտութիւնը հայ երիտասարդութեան մէկ մասին մէջ պատճառ եղած է թիւր բմբռնումներու՝ ներկայ հայ սերունդին և նախորդներու միջեւ կեցած բարոյական կապերուն և արժանիքի տարբերութեան նկատմամբ։

Կը տեսնենք եռանդուն, գործունեայ, անձնուէր, քիչ կամ շատ զարգացած երիտասարդներ որոնք զարգացումը և նոր գաղափարները կը համարին իրենց սերունդին մէկ մենաշնորհը, որմէ որպէս թէ բոլորովին զուրկ էին նախորդ սերունդները։ Ասկէ կը ծնին հինին համար արհամարհանք և նորին համար չափազանց յարգանք նորահաս միտքերու մէջ, որոնք բնականաբար ա՛լ շատ հեռի չեն ըլլար բարոյական վտանգաւոր ախտի մը ալ, այն է յաւակնոտութեան ենթակայ ըլլալէ։

Եւ իրօք վերջին տարիները դժբախտութիւն ունեցանք հայ երիտասարդութեան մէջ դիտելու յաւակնոտութեան տիպեր, փքած իրենց հրեւակայեալ բազմազան կարողութիւններով, խրոխտ իրենց ըրածին և ընելիքներուն համար, արհամարհական ակնարկ մը միայն ձգող իրենցմէ տարբեր մտածողներու վրայ, մանաւանդ եթէ այս վերջինները տարիքոտ մարդիկ ըլլան։ Այսպիսիներու հետ կարելի չէ կարծիքի ազատ փոխանակութիւն մը, օրինաւոր վիճաբանութիւն մը ունենալ առանց նախատուելու։

Երիտասարդութիւնը, հայ տոհմի այդ ծաղիկը՝ չէ որ կամբաստանենք. իր մէջ երեւցած սակաւաթիւ անհատներու վրայ է մեր խօսքը։ Մենք ատո՛նք մատնանիշ կընենք, զի երիտասարդութիւնն ու պատանեկութիւնը մեր յոյսն ու ապագան ըլլալով, ինչ որ ա՛նոնց կը վերաբերի պէտք է շատ մօտիկ ըլլայ սրտին այն սերունդին որ եկեր է ու կանցնի և որուն կը պատկանի այս տողեր գրողն ալ։

Այնէն սերունդ իբր ծնունդ իր նախորդին՝ ժառանգական օրէնքի զօրութեամբ տէր կը դառնայ ա՛նոր թողած բարոյական հարստութեան. այս կռուանին յենած՝ նոր սերունդը առաջ կը տանի արդէն սկսուած աշխատութիւնը և իր աշխատութեան արդիւնքը կը ձգէ ապագայ սերունդին։

Ինչ որ ենք մենք այսօր, մեր բոլոր բարեմասնութիւններով, ձիրքերով, մենք միայն մեզ, մեր աշխատութեան չենք պարտիր, այլ նաեւ հին սերունդներու, ա՛նոնց գործունէութեան, որոց արդիւնքը ժառանգեր ենք ժամանակին։ Առանց այդ ժառանգութեան, որ մեզ համար անգին դրամագլուխ մը եղած է, կարելի չպիտի ըլլար մեզ՝ ամբարել այն մտային պաշարը, որով կը պարծինք և հանիլ գաղափարներու զարգացմա՛ն այն աստիճանը, ուր կը գտնուինք։

Երբ ասոր համոզուինք, երբ ընդունինք թէ ապագայ սերունդն ալ միեւնոյն յառաջդիմութեան օրէնքին ուժով մի եւ նոյն առաւելութիւնները պիտի ունենայ մեր վրայ զորս մենք ունեցեր ենք նախորդ սերունդին վրայ, թէ՛ ճշմարտութեան կատարելապէս վերահասու եղած կըլլանք և թէ՛ կը դադրինք ինքզինքիս Աստուծոյ և բնութեան յանկարծական մենաշնորհներովը օժտուած սերունդ մը նկատել, որուն առաւելութիւնները հրաշքով մը ամենակարճ ժամանակի մը մէջ գոյացած են և չունին առընչութիւն անցած սերունդներու աշխատութեանց և զարգացման հետ։

Այնէն արժանիք մեզ միայն վերագրել՝ հակառակ է գիտութեան և տրամաբանութեան, վտանգաւոր՝ մեր բարքերուն համար և անարդար՝ մեր հայրերուն նկատմամբ, որոնք մեր երախտագիտութեան վրայ անժխտելի իրաւունք մը ունին՝ այն բարոյական ժառանգութեան պատճառաւ զոր իրենց գործունէութեամբ ստացեր և մեզ թողեր են։

Գիտնա՛նք գնահատել հինին և նորին միջեւ կեցած այս սերտ, անխզելի կապը։

## ՑԱՄԱՌՈՒԹԻՒՆ

Ցամառութիւնը՝ սկզբունք և կամ բանաւոր ու տրամաբանական մտածումներու հետեւանքը չըլլալով, անարժէք և ստորնացուցիչ է։

Մարդիկ կան, անձնուկ մտքի տէր, որոնք երբ անգամ մը գաղափար մը յղանան և կամ ուրիշի մը գաղափարը իւրացնեն, այնքան կը սքանչանան իրենց հանճարին և կամ ըմբռնելու ընդունակութեան վրայ, որ ալ անկարելի կըլլայ զիրենք իրենց գաղափարէն անջատել. հոն են, հոն կը մնան։

Տարիներ կը հոլովին ժամանակի ազդեցութեան տակ. ամէն բան կը յեղաշրջի և միայն իրենք են անփոփոխ մնացողները, ճիշդ Եգիպտոսի սփինքսին պէս։

Զե՞ն տեսնուիր յաճախ, անհատական և կամ հանրային կեանքի մէջ անձեր, այլապէս պատուաւոր, որոնք իրենց ուղեղին մէկ թելադրութիւնովը այնպիսի գաղափար մը կը յայտնեն որ բոլորովին անհեթեթ, անգործադրելի և երախայական է։

Փորձէ անգամ մը կոկել այդ գաղափարը, ուղիղ շաւղի մէջ դնել զայն, ճիգեր թափէ բանականութեան ձայնով և անվրիպելի փաստերով զինքը համոզելու. իզո՛ւր։ Գուցէ ներքնապէս շատ անգամ ըմբռնէ իր սխալը, բայց երբէք բացէ ի բաց խոստովանելու ազնուութիւնը չունենար. իր արժանապատուութեան դէմ հարուած մը կը նկատէ ընկրկիլը. ուստի նախամեծար կը սեպէ սխալէ սխալ թռչիլ ամենէն անել քաոսին մէջ իյնալու համար։ Այո՛, մարդիկներ կան, և սակաւ չէ՛ անոնց թիւը, որոնք կը կարծեն թէ աշխարհի մէջ ամէն հաճոյք, ամէն արժանապատուութիւն, մնոտի յամառութիւն մը առաջ քշելու մէջ կը կայանայ։ Ոչինչ չեն խնայեր յարգել տալու համար զայն, նոյն իսկ եթէ ծանր զոհողութիւններ յանձն առնել պէտք ըլլայ։

Իրենց մարդկային ամենէն փափուկ զգացումներուն մէջ կը վիրաւորին, նիւթական ծանր վնասներու կը հանդիպին, նոյն իսկ կը վրիպին այն նպատակէն որուն կը ձգտին իրենց գաղափարով. հոգ չէ. միայն թէ կատարուելու է ինչ որ անգամ մը իրենց բերնէն ելեր, կամ ուղեղին մէջ ճաթեր է։

Այսպէս, տեսնուած չե՞ն յաճախ որդեսէր ծնողքներ որոնք առանց ո և է հիմնական առարկութեան, լոկ յամառութեամբ իրենց զաւակաց դժբախտութեան և նոյն իսկ մահուան պատճառ դարձած են հակառակելով այնպիսի ամուսնութիւններու որոնք երկրային դրախտներ պիտի յօրինէին անոնց համար։ Հոգակոյտեր կան որոնք եթէ պրպտուին, ամենէն հրատոչոր սիրոյ կայծեր դեռ կրնան ճարճատեցնել. այնքան վառ եղած են հոն թաղուած, յամառութեան զոհ սրտերը։

Այս ախտը գլխաւոր արդիւնքներէն մին է կոյր տգիտութեան։ Իրաւ է թէ երբեմն զարգացեալ դասակարգին մէջ եւս կերեւայ ան, սակայն աւելի անօսր է այդ միջավայրին մէջ և հետզհետէ կը թանձրանայ ու վտանգաւոր հաւեմատութիւններ կը ստանայ որքան որ իջնայ մտաւորական ստորին խաւերու մէջ։

Ազգ, ընտանիք, պատիւ, հա-

բատութիւն բան մը չերեւար յամառին աչքին. երբեմն ճիւաղ կը դառնայ և մինչեւ անգամ անչունչ իրերու դէմ կը խիզախէ, բացորոշ կերպով ապացուցանելով թէ ինքը՝ շեղած բանականութեան ամէն օրէնքէ, այն կէտին հասած է որ բանաւոր մարդը անբան արարածին հետ չօշափման մէջ կը դնէ։

Զի մոռնանք նաեւ յիշել թէ այնպիսիներ ալ կան որոնք բաւական խելացի են այդ դատապարտելի կիրքը իրենց սեփական գործերուն մէջ չի գործադրելու. և ասպարէզ կընտրեն հանրային ամենէն կենսական գործերը, ուր անձնապէս կորսնցնելիք բան մը չունենալ կը կարծեն։ Արդարեւ ասոնք այն աստիճանի պժգալի արարածներ են որ երբեմն մարդ կը փորձուի անոնց տալու այն ածականները որոնք զարդ կը կազմեն յեղափոխական կուսակցութեանց շրջաբերականներէն շատերուն։

Ազգի մը տագնապալի օրերուն մէջ է որ կոյր յամառութիւնը ամենէն շատ վնաս և աւերում կը գործէ, այն օրերը որոնց մէջ, տեղի տալու, համակերպելու դրդրութիւնը ամենէն փրկարարն է։

Եթէ ամենէն մարդկային արարածի համար օգտակար է չի նստուիլ անմիտ յամառութեան մը գիրկը, իր և իրենցերուն բարեացը համար, հայ երիտասարդին համար նուիրական պարտք է ի սէր ամբողջ ազգին մաքրուիլ այն կեղտէն որ վերջ ի վերջոյ յակամայս դաւաճանի մը ծեփը կրնայ դառնալ։

Եթէ մեր մէջ իրերը աւելի մօտէն քննենք, ապշելով պիտի տեսնենք որ շատ անգամ անձնական շահը չէ, հաստատուն սկզբունք մը չէ որ մեզի անջատ կը պահէ մէկզմէկէ, այլ գարշելի ախտ է, յամառութիւնը։ Ի՜նչ ամօթալի թերութիւն ազատութեան ազնիւ ձգտումը ունեցող անձերու համար։

Դաւեր–Արշաւիր

## ԱՆՈՒՂՂԱՅ ՄԸ

—✕—

Հայերուն ծոյլ, թոյլ, աշխատութենէ փախչող, արագ ֆէլլահէն շատ աւելի տխմար ըսողը Պ. Լեւոն Մկրտիչեանն է եղեր։ Իրաւ որ զարմացայ մնացի։ Այս անունը կրողը երիտասարդ մըն է, իսկապէս չէնք շնորհք, պարկեշտ և աշխատասէր։ Զինքը Պոլիս ճանչցած եմ նոյն իսկ լրագրութեան մէջ, ուր ընդհանրապէս առեւտրական յօդուածներով կը փայլէր, ինքը վաճառականի դրագիր ըլլալով։

Անցեալները մեր գրած մէկ յանդիմանական յօդուածին մէջ ըսած էինք թէ ազգային նկարագիրն անուանարկող մը քաշուելու չէր իր անունը ծածկելէ. իրաւ ալ յօդուածագիրն իր անունը աքիլլեան քաջութեամբ մէջտեղ կարձէր, պահանջելով որ զինքն այպանողն ալ այդ հերոսութիւնը ընէ։ Սակայն Պ. Լեւոն Մկրտիչեան պէտք էր հասկնալ որ իր անուան և ուրիշ անուան մը ծածուկ պահուելուն միջեւ մեծ տարբերութիւն կայ. Լ. Մ. ազգին նկարագրին դէմ յարձակում կընէր. մինչդեռ Ե.ը պարզապէս այդ յարձակողին դէմ կը յարձակէր։ Ազգ մը իրաւունք ունի գիտնալ զինք անուանարկողին անունը. մինչդեռ ինչ կարեւորութիւն ունի ո՞եւէ հայու մը անունը որ իր պարտքը կատարած է ազգային պատիւը պաշտպանելով, ինչպէս պիտի ընէր ամէն հայ։ Հետեւապէս հարկ չենք տեսներ մեր անուան ամբողջութիւնը մատուցանել Պ. Լեւոն Մկրտիչեանին, վասն զի այդ անունը բանի մը չպիտի ծառայէ իրեն։ Եթէ ըսելիք ունի, կրնայ Ե. գրին ուղղել, որ կը ներկայացնէ ո՞եւէ հայ մը։

Մնուան մասին այսչափ։

Պ. Լեւոն կըսէ թէ զինքը նախատած եմ։ Ներեցէք, պարոն, դուք առանց ձեր ձեռքը զօրաւոր ու բաւական փաստեր ունենալու կելլաք նախատինքով կապտակէք ձեր ազգին մէկ կարծեցեալ տգարութիւնը. ու, զարմանալի յանդգնութեամբ մը, կըսէք թէ ձեր անձը նախատուած է։ Ես կը կարծեմ որ ազգ մը աւելի նուիրական է քան ո՞եւէ անհատի անձ։

Հայերուն աշխատասէր, գործունեայ և ժրաջան ժողովուրդ մը ըլլալն հաստատող փաստեր կուզէ պարոնը։

Կը խնդրենք իրմէ որ բարեհաճի դարձեալ աչքէ անցընել նոյն յօդուածը որուն մէջ ըսուած էր «արդէն ուրիշ ատեն խօսած ըլլալով հայոց աշխատասիրութեան մասին...»։ Պ. Լեւոն Մկրտիչեանի ձրի գրպարտութիւնները ցրելու համար մեր արդէն ցոյց տուած փաստերը մէջտեղ բերելու կամ թէ նորանոր ապացոյցներ տալու է եղեր։ Լրագրութիւնը անհատներ, չա՛տ ցանցառ անհատներ համոզելու համար չիտակը պարտաւոր չէ ամբողջ սիւնակներ զոհել։ Մեղքը չէ՞ լրագրին։ Մամուլը հանրութեանն է. անհատականութիւնը անոր մէջ շատ աննշան տեղ ունի։

Բայց որպէս զի բոլորովին զինքը իր փափագէն չզրկենք, իբրև փաստ թէ «հայերը ֆէլլահ լակոտէ մը աւելի տխմար» չեն, մեջ կը բերենք հետեւեալը.

«Քրիստոնեայ Արեւելք»ի յուլիս ամսուան համարին մէջ կը գտնենք շատ նամակներ գաւառական տան ձեւ ունեցող բաներ, մեզնից շատերը զարթացան եւ ուրախ ուրախ առաջ քայլեցին։ Այնտեղ կարելի էր գտնել համեմատաբար աւելի մաքուր սենեակ, սննդարար կերակուր եւ փոքր ինչ ազատութիւն։

Հենց որ բանտ մտանք, ես իսկոյն փռեցի պարգիսիս, դրի իմ վշտակից ու խորհրդակից փոքրիկ բարձս եւ պարկեցի քնելու։

Քունս շատ հանգիստ էր եւ անուշ երազներով...

Մի երկու ժամից յետոյ՝ յանկարծ ինձ զարթեցրին։

Զարթեցնողը մի չիկահեր, երկնագոյն աչքերով, խելացի դէմքով երիտասարդ զինուոր էր—Մալկով։

Ես փոքր ինչ բարկացած՝ նայեցի երիտասարդ զինուորի վրայ.

—Ներողութիւն, պարոն, ասեց նա, մենք ձեզ համար կերակուր եւ թէյ ենք պատրաստել. եթէ կը բարեհաճէք, կարող էք մեզ հետ ճաշելու. ձեր օրականը մի չնչին գումար է, եւ դուք դրանով չէիք կարող բաւականանալ։

—Որչափ բարի էք, Մալկով, յուզված՝ ասացի ես։

—Մենք ձեր թղթերը կարդացինք պարոն, դուք քաղաքական աքսորեալ էք, եւ մենք գիտենք որ դրանց մեծ մասը ազնիւ մարդիկ են... ներողութիւն որ դեռ առաւօտը ուշադրութիւն չը դարձրինք, գուցէ եւ անտեղի կերպով վիրաւորեցինք ձեզ ճանապարհին։ Այսուհետեւ այդպէս չի լինի։

Իմ յուզմունքը չափազանց էր, ես եթէ չամաչէի կը գրկէի այդ բարի երիտասարդին. ես նրան հեստեւեցի։

Մենք մտանք մի մաքուր ու զարթ սենեակ. սպիտակ ծածկոցով սեղանի վրա եռում էր մաքուր ու ոսկեփայլ սամավարը եւ իր տաք գոլորշիով սենեակը լցնում. զինուորները շրջապատել էին սեղանը, նրանցից մէկը լցնում էր բաժակները եւ բոլորովին ճերմակ սրբիչով սրբում։ Անկիւնում՝ բոցավառ վառարանը իր հրեղէն լեզուներով ֆանտաստիքական պատկերներ էր նկարում եւ մարդու սիրտը ուրախացնում։ Վառարանի կողքին նստել էր մի բարձրահասակ, դեղձան մազերով, խաժ աչերով երիտասարդ կին. նա փետրում էր մի խոշոր սագ։ Սենեակը բոլորովին բանտի նման չէր։ Հենց որ ներս մտայ, զինուորները ակնածութեամբ տեղ տուին ինձ, տիկինը ոտքի կանգնեց եւ իր քաղցրահնչիւն ձայնով ու ժպտալէն բարի գալուստ մաղթեց։

Մենք սկսեցինք թէյ խմել. իմ սիրտս բացուեց, վերջը ուրախ զրուցելէն ընթրեցինք—զինուորները իսկոյն քնեցին—իմ քունս չէր տանում, ես տիկնոջից մի գիրք խնդրեցի. նա իսկոյն տեղից վեր թռաւ եւ բերեց Նեկրասովի բանաստեղծութիւնները, ռուս ժողովրդի ցաւերով այրող գրողի երկը։

Ես ապշած նայեցի այդ հասարակ կնոջ վրայ։

Նա ժպտաց եւ ասեց. հը՛, զարմանում էք, որ իմ մօտ այդպիսի գիրք կայ։

—Այո, պատասխանեցի ես։

—Լաւ, սիրելի պարոն, պատմեմ թէ ինչպէս այդ գիրքը իմ ձեռքս է ընկել։

«Սրանից մի երկու տարի առաջ այստեղով Սիբիր տարին մի ուսեալ, հրաշալի դեղեցկութեամբ եւ շատ բարի օրիորդ... նա այստեղ հիւանդացաւ եւ մի շաբաթ մեզ մօտ մնաց։ Նա ինձ հետ շատ բարեկամացաւ, ես նրան շատ սիրեցի եւ շատ բան սովորեցի։ Միայն նրան տեսնելուց յետոյ հասկացայ որ քաղաքական աքսորեալները մեծ մասամբ բարի, ազնիւ եւ զարգացած մարդիկ են։ Միայն այն ժամանակ հասկացայ որ գուք հրէշներ չէք եւ տանջվում էք ժողովրդի համար, նրա ցաւերն են ստիպում ձեզ կուռել Զարերի դէմ եւ ենթարկվել ամենասոսկալի պատիժների. ահա այդ օրիորդը ինձ նուիրեց Նեկրասովի բանաստեղծութիւնները...

Էհ, ո՞ւր է հիմա այդ օրիորդը, հարցրի ես, տեղեկութիւն ունէ՞ք։

—Այո, գրեթէ արտասուելէն ասեց տիկինը. նա հիմա Սիբիրի հիւանդանոցներից մէկումն է, խելագարների բաժնում։ Նրա նշանածին, որը մի լաւ բժիշկ էր նախ Սիբիր աքսորեցին, ապա կողակները նրան սարսափելի կերպով ծեծեցին, օրիորդը հենց որ տեսնում է իր սիրեցեալի ջարդուփշուր եղած, անճանաչելի մարմինը, իսկոյն խելագարվում է։ Այդպիսով կորան ջախջախեցին երկուսն էլ, մի տաղանդաւոր երիտասարդ եւ մի հրաշալի, խելացի, ազնիւ աղջիկ... եւ ամեն տարի ո՞վ գիտէ քանիսն են կորչում...

Տիկինը էլ չը կարողացաւ իրան զսպել եւ սկսեց բարձր ձայնով լալ.

Եւ Ցանկարծ կանգ առնելով ինձ հարցրեց.

—Դուք էլ նշանած ունէ՞ք, պարոն։

—Դեռ ոչ, պատասխանեցի ես։

—Էհ, գոնէ այդ լաւ է։ Խեղճ կանայք ինչի՞ են սիրում, ասեց նա եւ շտապով դուրս գնաց, գուցէ աւելի ազատ կերպով լալու...

ՎԱՐԴՕ

## ԲՈՆՈՒԹԵԱՆ ԶՈՒՅԵՐ

( ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՔՍՈՐԵԱԼԻ ՅԻՇԵՏԱԿԱՐԱՆԻՑ )

—✕—

### Բ.

(Շար. նախ. թիւէն եւ վերջ)

Երբեմն մայրիները կորանում էին, ճղները իրար խառնում եւ կարծես միմեանց փարելով՝ իրար ականջի փսփսում.

—Զմեռը գալիս է, մահաշունչ եւ հիւսիսային ձմեռ...

Մէկ էլ այդ ծառերը բարձրացնում էին կատարները եւ կարծես հպարտութեամբ մեզ նայելով՝ ասում.

—Խեղճ արարածներ—ինչի՞ էք ընկճվել, ինչի՞ էք վիզ ճկում բիրտ ուժի առաջ—ամօթ ձեզ...

Այդ վայրկեանին գալիս էր քամու մի զօրեղ հոսանք, մի հարւածով մաքրում մայրիների գոռող ճակատները եւ նրանց ոսկեգոյն տերեւները խլում ու թոցնում հեռու... ես իմ աչքերով հետեւում էի այդ սլացող տերեւներին եւ մտածում.

—Դեռ հիմա այդ տերեւները մեր գլխի վերեւում էին, եւ, գուցէ զգում ու հասկանում էին թէ ինչ էր կատարվում մեր վիրաւոր սրտերում։ Հիմա մեր զգացածները կը խառնեն քամու հոսանքին, որ կը թռչի աշխարհի ամեն մի անկիւն եւ մեր վիշտը իր վզոցի հետ կը հասցնէ մեր կարօտեալ սիրելիներին։

Երեկոյեան ժամի չորսին հասանք կայարան. երբ որ հեռուից երեւաց փոքրիկ, գրեթէ բոլորովին գիւղական տան ձեւ ունեցող բանտը, մեզնից շատերը զարթացան եւ ուրախ ուրախ առաջ քայլեցին։ Այնտեղ կարելի էր գտնել համեմատաբար աւելի մաքուր սենեակ, սննդարար կերակուր եւ փոքր ինչ ազատութիւն։

Հենց որ բանտ մտանք, ես իսկոյն փռեցի պարգիսիս, դրի իմ վշտակից ու խորհրդակից փոքրիկ բարձս եւ պարկեցի քնելու։

Քունս շատ հանգիստ էր եւ անուշ երազներով...

Մի երկու ժամից յետոյ՝ յանկարծ ինձ զարթեցրին։

Զարթեցնողը մի չիկահեր, երկնագոյն աչքերով, խելացի դէմքով երիտասարդ զինուոր էր—Մալկով։

Ես փոքր ինչ բարկացած՝ նայեցի երիտասարդ զինուորի վրայ.

—Ներողութիւն, պարոն, ասեց նա, մենք ձեզ համար կերակուր եւ թէյ ենք պատրաստել. եթէ կը բարեհաճէք, կարող էք մեզ հետ ճաշելու. ձեր օրականը մի չնչին գումար է, եւ դուք դրանով չէիք կարող բաւականանալ։

—Որչափ բարի էք, Մալկով, յուզված՝ ասացի ես։

—Մենք ձեր թղթերը կարդացինք պարոն, դուք քաղաքական աքսորեալ էք, եւ մենք գիտենք որ դրանց մեծ մասը ազնիւ մարդիկ են... ներողութիւն որ դեռ առաւօտը ուշադրութիւն չը դարձրինք, գուցէ եւ անտեղի կերպով վիրաւորեցինք ձեզ ճանապարհին։ Այսուհետեւ այդպէս չի լինի։

Իմ յուզմունքը չափազանց էր, ես եթէ չամաչէի կը գրկէի այդ բարի երիտասարդին. ես նրան հետեւեցի։

Մենք մտանք մի մաքուր ու զարթ սենեակ. սպիտակ ծածկոցով սեղանի վրա եռում էր մաքուր ու ոսկեփայլ

ները գտնուող գերման միսիոնարներէ գրուած։ Ուրֆաէն գրուած նամակի մը մէջ գերման բասթէօր մը կըսէ. «Հայ ժողովրդեան պէս ազնիւ, երախտագէտ, աշխատասէր և ճշմարիտ քրիստոնեայ ժողովուրդ չիկայ...»

Գերմանացի միսիոնարին ըսածը հերքելու չափ արդեօք առաջ պիտի երթա՞ք, Պ. Մկրտիչեան։ Կամ թէ պիտի պահանջէ՞ք յիշեալ միսիոնարին անունը, որ այսպէս, անդիտակցաբար, կեղայ կը հերքէ ձեր անհաճոյ գնահատումը։

Յուսալի է։

Ե.

## ԹԱՏԵՐԱԿԱՆ

—×—

Կիրակի գիշեր տեղի ունեցաւ Աղքատախնամ ընկերութեան ի նպաստ տրուած ներկայացումը։ Թատերասէրներու և կամ լաւ է ըսել աղքատասէրներու հոծ բազմութիւն մը ամբողջ սրահը լեցուցած էր, ինչ որ բաւական կլորիկ հասոյթ մը կենթադրէ։

Դրամական յոյժ սահպողական պէտքի մը առջև սարքուած այս ներկայացումը անշուշտ իբր թատրոն կարեւորութենէ զուրկ է։ Սպանիացւոց ապետական կեանքէ միջադէպ մը, այդ Տօն Պաղանը, այն ժամանակամիջոցէն երբ թագաւորները անտառներու՝ խորը կը փախցնէին իրենց սիրուհիները։ Օտարի կեանք՝ օտար լեզուաւ արտայայտուած՝ միջակ կերպով միայն կրնար գմեզ հետաքրքրել։

Գալով դերակատարներուն, Գ. Ֆասուլեանճեան բեմական այնքան ծանօթ դէմք մըն է որ շատոնց արդէն գնահատուած է հասարակութենէն, եթէ ոչ ուրիշ կերպով, դէթ փայլուն գովեստներով։ Այս առթիւ երեւան եկած է նաեւ դերասանապետին մարդիչի լաւ յատկութիւնը, զի միւս դերակատարներն ալ, որոնք առհասարակ սկսնակներ են, քիչ շատ գոհացուցիչ կերպով ելան գործին մէջէն։

Նոյն գիշերը ներկայացման կազմակերպիչները անակընկալ մը պատրաստած էին որ զովարար հանգամանք մը պէտք էր սփռել սրահին մէջ տիրող հասարակածային ջերմութեան մէջ։

Վարագոյրը բացուելով տեսանք ամբողջ խումբը երկու կարգի վրայ շարուած, որ սկսաւ ընկերակցութեամբ նուագախմբին— յաջողակ արուեստասէրներէ բաղկացած— Ցալսրիկի եռանդոտ ու ոգեւորիչ քայլերգը երգել։

Ի՞նչ հրաշալիք։ Տօն Պաղանը, Տօն Քարլոս Բ.ը, Տօն Խոսէն և մնացեալ բոլոր Տօնները յանկարծ հայրենասիրական բուռն թափով համակուած հայեր դարձած էին։

Իրենց եռանդը ասկէց հասկցէք որ մոռցեր էին մինչեւ իսկ իրենց սպանիական սրածայր մօրուքները և չպարը փաթ տալ և ճշմարիտ հայու կերպարանքով ներկայանալ։ Այս ձախող պարագան Ցալսրիկը սպանեց։ Եւ որքան ալ փոյթ կը դնէին և բարձր ձայնով կը պնդէին թէ իրենք Ցալսրիկի քաջ զաւակներն են, ո՛չ ոք չէր հաւատար թէ իրաւ ըլլար այս բարեկենդանի հագուստներով զարդարուած անձերուն ըսածը։

Գեղեցկագիտական օրէնքներ կան, որոնք մանաւանդ բեմի վրայ նկատողութեան պէտք է առնուին։ Առանց անոնց թատրոնին նպատակը կը վրիպի և ճշմարտանմանը կորսուելուն պէս, խնդիրը ծաղրանքի կը դառնայ։ Այս պարագան աւելի լաւ կըլլար եթէ չի վրիպէր ճարտար մարդիչին աչքէն։

Դ.—Ա.

## ԼՐԱՔԱՂ

—×—

Արդէն ծանուցինք թէ ի նպաստ հայ կարօտեալներու Մոսկուայի մէջ պիտի հրատարակուի ռուսերէն լեզուով Եղբայրական օգնութիւն Թուրքիոյ վնասուած Հայերին խորագրով հատոր մը որոյ բաժնորդագրութիւնը արդէն բացուած է։

Այս մասին հետեւեալը կը կարդանք Արձագանքի մէջ.

«Ժողովածուն պիտի լոյս տեսնի Մոսկվայում մեր յայտնի հրապարակախօս Պ. Գր. Ջանշեանի խմբագրութեամբ։ Ինչպէս կը տեսնեն ընթերցողները, ժողովածուն չունենալով գրական և գեղարուեստական հարստութիւն է բովանդակում. նրան մասնակցում են ռուս գրականութեան և մամուլի մէջ ամենայայտնի, տաղանդաւոր ոյժերը. նրա մէջ կը լինին նոյն իսկ ռուս հռչակաւոր հանգուցեալ գրողների անտիպ երկերը, մասնակից են և հայ հրապարակախօսներ և հեղինակներ, վերջապէս մասնակից է և հանճարաւոր նկարիչ Ց. Այվազովսկու վրձինը։ Հաւատացած ենք որ Կովկասեան հայերը կը շտապեն անմիջապէս բաժանորդ գրուել այդ հրատարակութեան, որ չնայելով իւր ընդարձակ ծաւալին, իւր նիւթերի չտեսնուած հարստութեան, իւր ամենահամակրելի նպատակին— շատ էժան է, այն է 4–5 ռուբլի»։

---

Գոհութեամբ կիմանանք թէ Մեծ. Տիար Պօղոս Փափազեան տեղւոյս Թաղ. խորհրդին յանձնած է 1,318 ֆր. ոսկի, զոր ազգասիրաբար հանգանակած է Ֆիլիպէցի կրթասէր ազգայիններէ ի նպաստ Վառնայի ազգային նոր բակառոյց շէնքին։

Նուիրատուներուն ցանկը առաջիկայն պիտի հրատարակուի։

---

Տօպրիչէն կը գրեն մեզ թէ տեղւոյն ազգ. երկսեռ վարժարանի շինութիւնը գրեթէ երկու ամիս առաջ սկսեր է և թէ անկարելի ըլլալովտեղական հանգանակութեամբ գոցել բոլոր ծախքերը, Շինութեան Յանձնաժողովը որոշեր է Պուլկարիոյ ուրիշ հայաբնակ քաղաքներու մէջ ալ հանգանակութիւն կատարել Տիար Մ. Նշան Գաբրիէլեանի ձեռքով։

## ԱՐԾՐՈՒՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

—×—

Արծրունեան վարժարանի Բ. Տարեշրջանն ու դասախօսութիւնները կը սկսին սեպտեմբեր 1ին նոր վարձուած շէնքի մը մէջ, հայոց թաղ, Սալը չէշմէ։

Վարժարանը ընդունուած է Պուլկար Գիմնազիաներու ծրագիրը անոնց բարեփոխութեամբ մը՝ ներմուծելով անոր մէջ Ազգ. լեզու, Ազգ. պատմութիւն և գրականութիւն։

Վարժարանը ոչ թէ պիտի դիւրացնէ կառավարական դպրոցներու մուտքը, այլ պիտի պատրաստէ մինչեւ երրորդ դասարանները։

Ֆրանսերէն խօսակցութիւնը դիւրացնելու համար, պաշտօնի կոչուած են երկու վարժուհի, որոնց գլխաւոր զբաղումներէն մէկն ալ այդ լեզուով խօսակցութիւնը պիտի ըլլայ ուսանողներու հետ։

Մանկական սրահին մէջ գործադրելի է մանկապարտէզի դրութիւն։

Եթէ դաշնակի համար բաւական թիւով խնդրանք ըլլայ, կարելի է կարգադրութիւն մը ընել։

Վճարումներու համար ընդունուած է տարեմուտի սկզբունք. երեք պայմանաժամով՝ սեպտեմբերի, յունվարի և մարտի սկիզբները հաստատելի։

Արձանագրութիւնները կըսկսին վաղուընէ, ժամ 9—12, վարժարանի նախագրդ շէնքին մէջ և կը տեւեն մինչեւ օգոստոս 25։

Տեսչութիւն

---

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

## ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԿԱՄ

## ՄՐՄՈՒՆՋ ՀԱՅԿԱԿԱՆ

Սոյն երգարանը որ կը բաղկանայ առաւել քան 100 երեսէ, կը պարունակէ շատ մը հին և նոր ազատ երգեր, զորս այժմ ժողովուրդն սխորժանօք կ'երգէ։

Փափաքողք կրնան ստանալ զայն՝ փոխարէնը 1 ֆրանկի նակակագրոշմ (բօստի բուլ) խրկելով խմբագրութեանս, կամ դիմելով հետեւեալ հասցէներուն.

Տեարք

| | | |
|---|---|---|
| Արիս | Դուրպէթ. | Ռուսճուգ |
| Տիգրան | Աճէմեան | Շումլու |
| Կարապետ | Թօքսագալ. | Սիլիստրէ |
| Մարտիրոս | Քէնտիկեան | Պուրկազ |
| Խաչիկ | Թօհաճճեան | Սլիվէն |
| Ալէքս. | Տէմիրճիպշ. | Ֆիլիպէ |
| Իսկէնտէր | Արսլանեան | Տօպրիչ |
| Յովհաննէս | Պիզէոճեան | Պուգրէշ |
| Արժ. | Տէր Ղեւոնդ քհնյ. | Կալաց |
| Թէօֆիլ | Թէրզեան | Քէօստէնճէ |
| Ասատուր | Բրուտեան | Գահիրէ |
| Տիգրան | Արսլանեան | Աղէքսանտրիա |

Աղգ. վարժարանաց համար՝ երբ գէթ 10 հատ կ'ուզուի, 20 առ 100 զեղչ կը լինի։

---

## ՀԻՆՏԻՍԹԱՆՏԱ ԻԹԹԻԼԱԼ

—×—

Պիր վագրթատան պէրու ճէրիտէլէր Հինտլիլէրին ինկլիզլէրէ գարշը իթթիլալա սիւլիւք իթմէքտէ օլորգլարընը եաղմագտա վէ ինկիլթէրա ճէրիտէլէրի իսէ պու շայէաթա էհէմմիյէթ վերմէք իսթէմէզլէր իտի իսէտէ, ախիրէն ալընան հավատիալէր մէրքէզի Մալաքանդ եագընընտա օլան ինկիլիզ օրտուսընըն իւզէրինէ յուլիս 15տէ Հինտլիլէրին հիճիմ իթտիկլինի վէ ասքէր թէլէֆիյաթընտան մատտա զապիթլէրտէն պիրի էօլմիւշ վէ տէօրտիւ եարէլէնմիշ օլտըզընը պիլտիրմէքտէ տիրլէր։ Եէրլիլէրի պու հիճիմէ թէշվիգ իտէն իսլամ իւլէմատան Մաթ-Մ'օլա նամ պիրի օլուպ, կիճէ վագթը ինկիլիզ օրտուսը իւզէրինէ եիւրիմիշլէր իսէտէ. պունլար էվվէլտէն խապէրտար օլտըգլարը սէպէպլէ Հինտլիլէրի լայըգը վէճճ իւզրէ գապուլ իտէրէք, Նիհայէթ անլէրի տաղըմըշլար տըր։

Զաթթարտա տախի հալ բէք թէհլիքէլի օլուպ, մուխապէրաթ քէսիլմիշ վէ ճիվար օվալար բէք չօգ սիլահլը եէրլիլէր իլէ տօլմուշ տըր։

Շու սըրա ինկիլիզ կազէթալարը Հինտլիլէրին պու ըսեանընա պիր տէրէճէ էհէմմիյէթլի նազարլէ պագմագտա վէ պու իշլէրտէ Սուլթանըն տախի բարմադը տախիլ օլտըգընը միւշահէտէ իթմէքտէ տիրլէր։

Կալկաթատան Տէյլի–Մայլա քէշիտէ օլունան պիր թէլէկրաֆ պիլտիրմիշ տիր քի, Սուլթան մէմուրը մախսուս վասիթասը իլէ հինտլիլէրէ պիր ֆէրման եօլլայուպ, Միւսլիմանլարընը խալիֆէյէ օլան վազիֆէլէրինի կէօսթէրմիշ վէ ումում իսլամլարընն պիրլիքտէ սիեասի պիր հարէքէթի իթմէլէրինէ նէ մուհասէնաթը օլապիլէճէկինի պահս ու պէյան իթմիշ տիր։

Քէպա Սթամպոլընն պաղը թիւրք կազէթալարը՝ Լօրա Սօլզպէրինին Թիւրքքիայա գարշը թուրմուշ օլտըզը բօլիթիգա սէպէպի իլէ հինտլի իսլամլարընն հիտտէթի թահրիք օլընմըշ օլտըգընտան պահպէ, անլէրին իթթիլալ չըգարաճագլարընը թապիի տիր տէմէքտէ իտիլէր։

Սուլթան Հինտիալը իսլամլարընն ճէհալէթինտէն պիլ իսթիֆատէ խալիֆէլիք բէրաէսի ալթընտա անլէրի ամալը ֆասիտէսինէ ալէաթ իթմէք խիւլեասը՝ իլէ ըսեանէ թէշվիգ իտէրէք՝ պինլէրճէ քէսանընն ինկիլիզ ալէթէշի իլէ մահվ օլմասընա սէպէպ օլմագտա տըր։

Իսլամիյէթին 13 ասըր էվվէլ Արապիսթանտա վիճուտ պուլմասընտան պու կիւնէ գատար, թէ-

վարիսի իսլամիյէ միւթալաա օ-
լընտրգտա, Մուհամէտտէն պաշ-
լայարագ պու կիւնքի խալիֆէյէ
կէլէնէ տէկին հէր պիրի քէնտի
մէվգիսընդն մուհաֆազասը, շէ-
րէֆի վէ մաղրուրիյէթի իչիւն
ճահիլ էհալինին թասասուպընը
թէշվիգ իտէրէք տէֆաթլէ տիւն-
եայը գան իլէ միւլէմմա իթտիր-
միշ վէ նիւզպինլէրճէ քէսանդն
մահվիյէթինէ սէպէպ օլմուշ օլ-
տրգլարընա գանասթ հասել օ-
լուր։ Էվվէլթ թէվարիխի իսլամ-
յէի միւթալաա իտէն պէհագին
իսլամիյէթ քէնտի խալիֆէլէրի
իլէ տիւնեայը խարապ իթմէք-
տէն մասատա ինսանիյէթէ հիչ պիր
մուհասինաթ կէսթէրմէմիշ օլտը-
ղընը իթիրաֆ իտէր։

## ՍԹԱՆՊՕԼՏԱ
### ԵԷՆԻ ՎԱՒԳՈՒԱԹ

—×—

Բէնճէնպիհ կիւնքի Իգտամընդն թէպ-
լիղաթը ըէամիյէ գըսմընտա աթիտէ-
քի օգունմընդ տըր։

—Ցիւնքի չարշէնպիհ կիւնի
սաաթ սէքիզ բատտէլէրընտէ Պա-
պը Ալինին ալթ գաթընտա վա-
գը թէշրիֆաթ գալէմի էօնիւնտէ-
քի արալըգ մահալիստէ տինամիթ
մէմլու պիր խումպարա բաթլայա-
րագ օրալարընդն պագը ճիհէթլէրի-
նի բախնէտար էյլէմիշ վէ պու-
նուն թէէսիրի իլէ տէօրթ օտաճը
մէճրուհ օլուպ, պիրիսիտէ ալտը-
ղը ճէրիհէտէն վէֆաթ իթմիշ, վէ
ենինէ վագթը մէղքիւրատ Պէյօղ-
լունտա միւթէսարըֆիյէթ տաի-
րէսի էօնիւնտէ պիր խումպարա
ամբըմընդ իսէտ ամէէ ալսամընդ
վէ պունլարընդն միւթէճասիրլէրի
օլան իքի էրմէնի սայէի գուտ-
րէթվայէի հաղրէթի բատիշահի-
տէ տէրհալ տէրտէսթ օլունմընդ
տըր։

Եենինէ այնը վագթտա Ղալա-
թատա Պանգը Օսմանի տէրու-
նինտէ էլինտէ պիր բաքէթ իչին-
տէ տէօրթ ֆիլիթիլի պիր տինա-
միթ խումպարասը օլտըղը վէ ա-
թէշլէմէք իւզրէ պուլունտըղը հալ-
տէ քէզալիք պիր էրմէնի տէր-
տէսթ օլունուպ, իչիւտէ թահ-
թը իսթինթագ վէ իսթիճվապա
ալընմընդ վէ թահգիգաթը մուգթա-
զիյէ իճրա օլընմագտա պուլուն-
մընդ օլտըղընտան, թէպէյիւն իտէ-
ճէք հալէ կէօրէ՝ մէրգումվար հագ-
լարընտա միւճազաթը գանունիյէ
իճրասը մուգարրէր օլմաղլէ վէ
սայէի էմնիյէթվայէի հաղրէթի
խիկաֆէթբէնահիտէ իթթիխազ
գըլընան թէտապիր սէմէրէսի իլէ
հէր թարաֆճա ասայիշ վէ ընզի-
պաթ միւքէմմէլէն ճարի պուլընը-
մաղլէ իլանը քէյֆիյէթէ իպթի-
տար օլունտը։

Սթանպօլտան ալընան խուսուսի
մէքթուպլար տախի վուգուաթը
պէրվէճճի պալէտա նագշ իթմէքտէ
տիրլէր։

### ՊՈՒ ԿԻԻՆՔԻ
## ԹԷԼԷԿՐԱՖԼԱՐ

(Այժանա Պալկանիք)

Սթանպօլ, 6 Օգոստոս

Պէյօղլու-Հիւքիւմէթի տաիրէսի
էօնիւնտէ պիր պօնպա ամբըլտը
իսէտէ բամթլամատը։ Պունտան
տօլայը պիր շիւբէլի էրմէնի
տէրտէսթ օլընտըղը սէօյլէնմէք-
տէ տիր։ Պու սէպէպլէ պիր գա-
ըըշըգլըգ հուսուլա կէլուպ, պիւ-
թիւն մաղազալար գաբանտը վէ
պիլախէրէ եէնիտէն աչըլտը։

Ղալաթատա վէ Սթանպօլտա
տախի այնը վուգուամթլար հու-
սուլա կէլմիշ օլարընդն տայիր
շայիալար չըգմըշ տըր։

Իքինճի պիր թէլէկրաֆ տա-
խի՝ էօյլէնտէն սօնրա իքի էրմէ-
նիլէրին Պանգը Օսմանիտէ շիւ-
բէլի պիր հարէքէթտէն տօլայը
թուլթուլմըշ օլարգլարընը պիլ-
տիրմիշ տիր, պունլարտա տինա-
միթ պուլընտը։

Պապը Ալինին էօնիւնտէ՝ սա-
տընըազամընդն վէ խարիճիյէ նազը-
ըընդն միւզէքքէրէ տաիրէսինտէ
պիր պօնպա բամթլատը։ պիր չօգ
ճամլար վէ չէրչիվէլէր գըրըլտը-
լար։ թուլումպաճընլար ալէամթլարը
իլէ մէղքիւր պինանընդ էմթրաֆընա
տիկիլմիշլէր տիր։ խարիճիյէ նէ-
զարէթինտէ պուլունան ումում մէ-
մուրլար գաչտըլար։ Եարէլիլէր
տախի պուլունտըղը սէօյլէնմէքտէ
տիր։ միւթէճասիրլէր էրմէնիլէր
վէ կէնճ թիւրքլէր տիր։ Սթան-
պօլտա տիւքեանլար գաբանտըլար։
գարագօլար կէկլինմէքտէ տիր։
պիր չօգ ինսանլար սօքալար էլէ-
բինտէ պէօլիւկ պէօլիւկ թօբլան-
մընդ։ Կիճէ իչիւն էն միւ-
էսսիր թէտպիրլէր էլէ ալընտը։

Թօբհանէնին գօնֆէրանսը պաշ-
գա կիւնէ պըրագըլտը։

Հապէշիսթան գրալը Մէնէլիք-
տէն Սուլթանա հէտիյէլէր կէլթի-
րէն պիր էլչի պուրայա եէթիշտի։

Սաթինա, 7 Օգոստոս

Միւսալէհէ մէսէլէսի թէէխիր
օլընտը։

Գաչմընդ օլան մուհէճիրլէրտէ
խասթալըգ զուհուր իթմիշ տիր,
1000 քիշինին մուհաֆազասը ի-
չիւն եէնի մէսարիֆաթ իթմէք
լազըմ տըր, ֆագաթ բարաճա
սուհուլէթ կէօրիւնմէյօր։

## ՄԻԻԹԷՆԷՎ ՎԻԷ

—×—

Մէքթէպի Հարպիյէի Թըպիյէ-
տէն 280 թալէպէլէր Գայսէրի
նամ վարօրլէ սալը կիւնիւ մէնֆիյէ
եօղանըլտըլար։

—

Վիէննատան վիրուտ իտէն թէ-
լէկրաֆլար իմբէրաթօր Ֆրանց
Եօզէֆին եէվմի վէլատէթի օլմագ
մինասիպէթի իլէ Աւստրիանընդն հէր
թարաֆընտա մութանթան տօնան-
մալար իճրա օլընմըշ օլտըղընը
պիլտիրտիլէր։

——

Բէթրսպուրկտան Վիէննայա վէ-
րիլէն պիր թէլէկրաֆ՝ Եունանիս-
թանընդն մալիյէսի իւղէրինէ տէվ-
լէթլէր թարաֆընտան գօնքրոլ ու-
սուլինին թէսիսինէ Ռուսիանընդն
գարշը կէլէճէկինէ տայիր չըգան
հավատիսաթը թէքզիպ իթմէք
իլէ, Ռուսիանընդ՝ պու մէսէլէտէ
տախի տիկէր տէվլէթլէրէ միւթ-
թէֆիգ պուլունտըղընը պիլտիրմիշ
տիր։

——

Սթանպօլտան պա թէլէկրաֆ
Սբանտարտա պիլտիրիլտիկինէ
կէօրէ, ախիրէն թէվգըֆ օլունան
1,620 միւսլիմանլարը թահթը մու-
հաքքէմէյէ ալմագ իւզրէ մախ-
սուսի պիր տիվանը հարպ թէշքիլ
օլընմըշ տըր։

——

Ձէվատ բաշա Գանհատա մու-
վագգաթ պիր մահքէմէ թէշքիլ
իթմէք թէշէպպիւսինտէ պուլընը-
մըշ իտի իսէտ, ամիրալար պու
կիպի պիր մահքէմէնին թէսիսինի
գապուլ իթմէմիշլէր։ վէ ատանընդն
ասայիշինի իխլալ իտէն միւճրիմ-
լէրի մուհաքքէմէ ալթընա ալմագ
իչիւն էվրօբալը զապթիթանընտան
միւթէշէքքիլ, հէյէթը մահքէմէ-
նին եինէ մուամէլէյէ պաշլամասը-
նը թահթը գարարա ալմըշլար
տըր։

——

Կէնճ Թիւրքիա նամ թիւրք
գոմիթէնին գահրամանի ըէյի-
սի վէ Միզան նամ ճէրիտէի
մէնֆուրէնին մուհարրիրի մահուտ
Մուրատ պէյին՝ իքի սէնէտէն
պէրու մէնսուպիյէթ կէօսթէրտի-
կի Կէնճ թիւրքլէրէ խըյանէթէն
Սթանպօլա կէլմիշ օլտըղընը կա-
զէթալար եազմըշ տըր։ մէրգում
Իգտամ կազէթանընդն մուհարրիրի
իլէ կէօրիշմէսինտէ՝ խարիճտէ
պուլունան տիկէր կէնճ թիւրք-
էրին տախի քէնտիսի կիպի այ-
նէսիպ օլտըգլարընը իմա իտէն
պիր թագըմ միւքեալէմէտէ պու-
լունմըշ վէ նիհայէթ տէմիշ տիր
քի «վէլհասել միւլք բատիշահընդն
տըր, վէ թապիի տիր քի պիզտէն
վէ հէրքէստէն ղիյատէ քէնտիսի
մէմալիքին թէրագգըյաթ ու պախ-
թիյարլըղընը արզու իտեր։ Մէ-
մալիքին ահվալընը իսլահ իթմէք
իչիւն զաթը շահանէնին մուգատ-
տէս մագսէտինէ խըտմէթտէ պու-
լունմագ պապընտա թապասի սա-
տըգէ միսիլի Սուլթանընդն լութ-
ֆու ինայէթինի իսթիրհամ իթ-
մէքտէն մասատա պիր մագսէտիմ
նէ օլմուշ վէ նէ տէ օլաճագ
տըր։

Ագերի՛ն Մուրատ պէյ։

——

Թէպրիզտէն Տէյլի Նիւհսէ վէ-
րիլէն պիր թէլէկրաֆ տէմիշ տիր
քի Ահմէտ-Թիւրք սինօրը իւզէրին-
տէ էրմէնի ֆէտայիլէր վէ ֆիւրա-
լէր պէյնինտէ միւսատէմէ վուգու
պուլուպ, ֆիւրալէրտէն ալթը քի-
շի էօլմիւշ։

Էգօ տը Բարինին նէշր իթտիկի
պիր թէլէկրաֆա կէօրէ, էրմէնի-
լէր վէ նիկամի թիւրք ասքէրլէր
պէյնինտէ գավկա վուգու պու-
լուպ, էրմէնիլէրտէն 68 քիշի էօլ-
մէքլէ սինօրտան իչէրի չէքիլմիշ-
լէր տիր։ Թիւրք հիւքիւմէթի եէ-
նիտէն 10,000 ասքէր եօլամըշ
տըր։

## ԶԱԽԻՐԷ ԲԻԱՑԱԱԸ

Վառնա 9 Օգոստոս

Պուղտայ
Վակօն, եօգ
Արապա, լիպրա 57–61, հէքթօլ. 16–17 ֆրանք

Արբա
40–42 լիպրա, հէքթօլթ. 5,80–6
Նարօլէոն 20,60 ֆռ. հիսապը իլէ
Կիւնտէ եալընըզ 15–20 արապա
պուղտայ վէ 5–6 արապա արբա
էնտիկի սէպէպլէ օլան մուամէլէ
բէք էհէմմիյէթսիզ տիր։ Բիացա՝
գավի։

Եէնի մահսուլատան կիւնտէ 8–10
արապա պուղտայ վէ 5–6 արապա
արբա կէլմէկէ պաշլամընը տըր։
պուլտայ լիպրասը՝ 47տէն 53,
ֆիյաթ՝ 10–13 ֆրանգ. արբա
լիպրասը 38տէն 41, ֆիյաթ
5,60–6։

## Ա Զ Դ

Փորձառու եւ երկար տարեն ազգային
վարժարանաց մէջ պաշտօնավարած,
եւ Ուսումնական Խորհրդոյ կողմէն
վկայեալ՝ դաստիարակ եւ երաժիշտ ու-
սուցիչ մը պատրաստ է պաշտօն ստանձ-
նել չափաւոր ամսականով մը։

Փափաքողք պարտին դիմել ուղղակի
իրեն հասցէին,

Ֆիլիպէ Քոռչունլու հան ետ. Պաղ-
տասար Տարխանեան։

## ԿՈՒԶԷ՞Ք ԵՐԻՏԱՍԱՐԴԱՆԱԼ

——

Դիմեցէք Փ. Պօլսոյ «Տնեաց Պօրիս»
հրապարակի վրայ Օթել Պուլկարիայի
ներքեւ թիւ 199 սափրիչի խանութը,
ուր պիտի գտնէք՝ ճերմկած մազերը,
մօրուքը ու պեխերը սեւցնելու համար
ԿՐԻՆ ներկը։

Երկար փորձերէ վերջը յաջողեցայ
պատրաստել սոյն ներկը, որ տարբա-
լուծուելով Առողջապահական պատ-
ժողովոյ տնօրէնութեան կողմանէ հաս-
տատուած է թէ ոեւէ վնասակար
նիւթ չպարունակեր եւ որուն առաջին
անգամ գործածութիւնը պիտի ապա-
ցուցանէ թէ իւր տեսակին մէջ մինչեւ
հիմայ երեւցածներէն ամենէն գերա-
զանցն է։

5—10 ԿԱՐԱՊԵՏ ՉԱՔԱՐԵԱՆ